Կյանքի որակը Հայաստանի Հանրապետությունում

Նավասարդյան Մ. Ա.
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Հայաստան, Երևան)
navasardianmichael@gmail.com

Վճռորոշ բառեր՝ կյանքի որակ, կյանքի որակի տարբերակվածություն, բնակչության որակի ինդեքս, կյանքի միջավայրի որակի ինդեքս, կյանքի որակի ինդեքս:

Качество жизни в Республике Армения

Навасардян М. А.
Армянский государственный экономический университет (Армения, Ереван)
navasardianmichael@gmail.com

Резюме: Качество жизни-довольно многогранное и комплексное понятие. Оно характеризует в нынешних законодательных, политических и институциональных условиях удовлетворенность жизнью в стране, что обусловлено определенной функциональностью общества, социальными ценностями и представлениями. Вычисление индексов качества населения, качества жизненной среды, и с их помощью индекса качества жизни в Армении для каждого региона и для столицы показывает, что в стране есть много проблем. В основном-это сильный поток эмиграции, высокий уровень бедности, а социальная инфраструктура нуждается в улучшении.
Ключевые слова: качество жизни, дифференциация качества жизни, индекс качества населения, индекс жизненной среды, индекс качества жизни.

Life quality in Republic of Armenia

Navasardyan M. A.
Armenian State University of Economics (Armenia, Yerevan)
navasardianmichael@gmail.com

Abstract: Quality of life is multifaceted and complex concept. It characterizes the satisfaction with life in current legislative, political and institutional conditions. The calculation of the indexes of population quality and living environment quality in Armenia for each region and for the capital shows that the population quality in the country is higher than the living environment quality. Research about the life quality index in RA showed there are many problems in the country. Basically, there is a strong flow of emigration, high level of poverty, and social infrastructure needs to be improved.
Keywords: quality of life, differentiation of quality of life, the population quality index, the living environment index, the quality of life index

«Կյանքի որակ» հասկացությունը մշտապես գտնվել է հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այն տնտեսական կարևորագույն եզրույթներից է, որը թույլ է տալիս պատկերացում կազմել հասարակության սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

Կյանքի որակի վերլուծության ընթացքում առաջացող խնդիրների ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտական տեսանկյունից այդ հասկացությունը ոչ այնքան պարզ է և միանշանակ: Ներկայումս այն տարբեր գիտությունների ուսումնասիրության առարկա է, առաջին հերթին՝ հասարակագիտության, էկոլոգիայի և տնտեսագիտության համար: Կյանքի որակը բազմակողմ և համալիր հասկացություն է, քանի որ այն ներառում է առանձին անհատի, ինչպես նաև սոցիալական տարբեր խմբերի և շերտերի կյանքի, առօրյայի, աշխարհայացքների, սպառման, շրջակա միջավայրի, հոգեկանի, վարքագծի, հասարակական և աշխատանքային գործունեության հարցեր [1, էջ 115]:

Կյանքի որակ հասկացության բնորոշումը մինչ այսօր քննարկման առարկա է, քանի որ դրա տարբեր մեկնաբանումները ներկայացված են բազմաթիվ սոցիալ-տնտեսական և քաղաքական ուսումնասիրություններում: Ավելին, բազմաթիվ հեղինակներ կյանքի որակը նույնացնում են բարեկեցության, կենսաձևի, կենսապայմանների, կենսամակարդակի և մի շարք այլ նմանատիպ եզրույթների հետ: Կան հեղինակներ, որոնք կյանքի որակը նույնացնում են բարեկեցության հետ, այն քննարկում լայն իմաստով և բնութագրում որպես հարմարավետ ու անվտանգ գոյության

համար պայմաններով ապահովվածության աստիճան: Մինչդեռ մյուսները կյանքի որակը ներկայացնում են որպես բարեկեցության բաղկացուցիչ մաս: Նրանց կարծիքով բարեկեցությունը լայն հասկացություն է և իր մեջ ներառում է կենսամակարդակը, ապրելակերպը և կյանքի որակը:

Հիմք ընդունելով կյանքի որակի բնագավառում առկա համաշխարհային տեսական ու գործնական փորձը և առաջնորդվելով դրա հնարավոր առավելագույն ընդգրկմամբ ու տեղային առանձնահատկությունների հետ համադրման սկզբունքով՝ տրվել է կյանքի որակի աշխատանքային սահմանումը. կյանքի որակը տվյալ պահի դրությամբ երկրի օրենսդրական, քաղաքական և ինստիտուցիոնալ միջավայրի համատեքստում, հասարակության որոշակի ֆունկցիոնալության և հասարակական արժեքներով ու ընկալումներով պայմանավորված, երկրում ապրելուց բավարարվածության աստիճանն է [2, էջ 38]:

ՀՀ-ում ապրելակերպի տարածական տարբերությունների բացահայտման նպատակով վիճակագրական տվյալների հիման վրա կատարենք կյանքի որակի համաթվի հաշվարկ: Այն հնարավորություն կտա օբյեկտիվ տվյալների հիման վրա ստանալ ՀՀ-ում ապրելակերպի դիֆերենցման պատկերը, պարզել՝ որ մարզերում են առավել շատ խնդիրները, և կատարել դրանց առավել մանրակրկիտ հետազոտություն: Կյանքի որակի գնահատման ժամանակ բախվում են հետևյալ հիմնական խնդիրներին.

1. կյանքի որակի հաշվման համընդհանուր սխեմաներ, բանաձևեր դեռևս չկան,
2. ցուցանիշների կոնկրետ քանակի որոշում,
3. նորմավորման և ընդհանրացման մեթոդների ընտրություն:

Կախված հետազոտության մասշտաբից և առկա հնարավորություններից՝ կարող են օգտագործվել մինչև թվով 1000 տարբեր բնույթի օբյեկտիվ ցուցանիշներ [3, էջ 85]: Մենք նպատակահարմար ենք համարում կյանքի որակի հաշվարկը կատարել 23 ցուցանիշներով,որոնք խմբավորված են երկու խմբի մեջ՝ բնակչության որակ և կյանքի միջավայրի որակ [4, էջ 191]:

Բնակչության որակի մեջ ներառել ենք հետևյալ ցուցանիշները՝

- բնական աճ՝ 1000 բնակչի հաշվով,
- միգրացիայի սալդո՝ 1000 բնակչի հաշվով,
- աշխատանքային ռեսուրսների բաժին՝ տոկոսով,
- զբաղվածության բաժին՝ տոկոսով,
- մանկական մահացություն՝ 1000 նորածնի հաշվով,
- սովորող երեխաների և երիտասարդների բաժին՝ տոկոսով,
- աղքատության մակարդակ՝ տոկոսով,
- սպառողական միջին ամսեկան ծախսեր՝ 1 բնակչի հաշվով,
- միջին ամսական աշխատավարձ՝ դրամով,
- միջին ամսական կենսաթոշակ՝ դրամով,

իսկ կյանքի միջավայրի որակի մեջ՝

- արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալ՝ դրամ 1 բնակչի հաշվով,
- գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալ՝ դրամ 1 բնակչի հաշվով,
- ծառայությունների ծավալ՝ դրամ 1 բնակչի հաշվով,
- բնակարանով ապահովվածություն՝ մ^2 1 բնակչի հաշվով,
- բժիշկների թվաքանակ՝ 10000 բնակչի հաշվով,
- կապի ծառայությունների ծավալ՝ դրամ 1 բնակչի հաշվով,
- սպառողներին բաց թողնված ջրի ծավալ՝ լիտր 1 բնակչի հաշվով,
- սպառողներին բաց թողնված գազի ծավալ՝ մ^3 1 բնակչի հաշվով,
- մանրածախ առևտրի շրջանառություն՝ դրամ 1 բնակչի հաշվով ,
- հանցագործությունների քանակ՝ 1000 բնակչի հաշվով
- մթնոլորտային արտանետումներ՝ կգ 1 բնակչի հաշվով,
- թափոնների քանակ՝ կգ 1 բնակչի հաշվով,
- բնապահպանական ծախսեր՝ դրամ 1 բնակչի հաշվով:

Տվյալների նորմավորումն իրականացրել ենք գծային մասշտաբավորման մեթոդով, որն օգտագործվում է ՄԱԿ-ի կողմից մարդկային ներուժի զարգացման ինդեքսի հաշվման

ժամանակ [5, էջ 2], իսկ ընդհանրացումը՝ բոլոր ցուցանիշների միջին թվաբանականի հաշվման միջոցով, որտեղ բոլոր ցուցանիշները վերցվում են հավասար կշռով:

Հաշվել ենք 2016թ.-ին յուրաքանչյուր մարզում և մայրաքաղաքում բնակչության որակի, կյանքի միջավայրի որակի ինդեքսները, որոնց միջին թվաբանականը կլինի կյանքի որակի ինդեքսը:

Ըստ կյանքի որակի՝ Հայաստանի Հանրապետությունում կարելի է առանձնացնել երեք կարգի տարածքներ՝

1. մարզեր՝ Լոռի, Շիրակ, Տավուշ, Կոտայք, Գեղարքունիք, Արարատ, որտեղ կյանքի որակը շատ ցածր է (0-0.2),
2. մարզեր՝ Արագածոտն, Արմավիր, Վայոց ձոր, Սյունիք, որտեղ կյանքի որակը ցածր է (0.21-0.4),
3. Երևան, որտեղ կյանքի որակը միջին մակարդակի է (0.457):

Ընհանուր առմամբ հանրապետությունում բնակչության որակն ավելի բարձր է, քան կյանքի միջավայրի որակը:

Հաշվելով Երևանի և մարզերի կյանքի որակի ինդեքսների միջին թվաբանականը՝ ստացել ենք հանրապետությունում կյանքի որակի ինդեքսը՝ 0.212, որը համապատասխանում է ցածր մակարդակի ստորին սահմանին:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, կյանքի որակը Լոռու մարզում ամենացածրն է: Այստեղ առկա են ժողովրդագրական, զբաղվածության, բնապահպանական հիմնախնդիրներ, ցածր է կենսամակարդակը, բնակչության անվտանգության, առողջական մակարդակը, մեծ է միգրացիան: Կա սոցիալական ենթակառուցվածքի կատարելագործման, աշխատատեղերի ստեղծման կարիք: Մարզում առավել հրատապ է բնապահպանական հիմնախնդրի լուծումը, ինչի շնորհիվ կնվազի մանկական մահացությունների թիվը, կմեծանա կյանքի միջին տևողությունը:

Հաջորդ շատ ցածր կյանքի որակ ունեցող մարզը Շիրակի մարզն է, որտեղ աղքատության մակարդակն ամենաբարձրն է, բարձր է նաև մանկական մահացության մակարդակը, ցածր՝ զբաղվածության(ամենացածրը հանրապետությունում), միջին ամսական աշխատավարձի, արդյունաբերական արտադրանքի ծավալի, բնակարանով ապահովվածության, բնապահպանական ծախսերի ցուցանիշները: Երկու մարզերում էլ ուղիղ ցուցանիշները փոքր են, հակադարձները՝ մեծ: Շիրակի մարզում առաջնահերթը աշխատատեղերի ստեղծումն է:

Կոտայքի մարզում մեծ միգրացիայի պատճառով փոքր է աշխատանքային ռեսուրսների քանակը, փոքր է նաև զբաղվածների, սովորողների բաժինը, ցածր՝ կենսամակարդակը, անձնական անվտանգության, բնակարանով ապահովվածության մակարդակը, շատ են մթնոլորտային արտանետումները: Այստեղ կարևոր է ռեկրեացիոն ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու սպասարկման ոլորտի զարգացումը:

Տավուշի մարզում դիտվել են բնական աճի, արդյունաբերության համախառն արտադրանքի, ջրի, գազի սպառման ծավալների ամենացածր ցուցանիշները, ցածր են նաև միջին ամսական աշխատավարձի, ծառայությունների ծավալի ցուցանիշները, բարձր է մանկական մահացությունը, իսկ միգրացիայի սալդոն բացասական է: Այստեղ առավել հրատապ է սոցիալական ենթակառուցվածքի բարելավումը:

Գեղարքունիքի մարզում ևս կենսամակարդակը ցածր է, և առկա է սոցիալական ենթակառուցվածքի կատարելագործման հիմնախնդիր: Այստեղ կարևոր է նաև բնապահպանական ծախսերի ավելացումը, հատկապես, որ այստեղ է գտնվում Սևանա լիճը:

Արարատի մարզում աշխատանքային ռեսուրսների բաժինը փոքր է, որը բացատրվում է մեծ միգրացիայով: Այստեղ փոքր է սովորողների բաժինը, ցածր՝ կենսամակարդակը, կա սոցիալական ենթակառուցվածքի բարելավման խնդիր:

Արագածոտնի մարզում փոքր է աշխատանքային ռեսուրսների, սովորողների բաժինը, ցածր՝ կենսամակարդակը, արդյունաբերական արտադրանքի ծավալը, առկա է սոցիալական ենթակառուցվածքի բարելավման խնդիրը:

Արմավիրի մարզում բարձր է աղքատության մակարդակը, ցածր՝ կենսամակարդակը, վատ՝ սոցիալական ենթակառուցվածքի վիճակը: Փոքր է սովորողների բաժինը, արդյունաբերական արտադրանքի ծավալը:

Աղյուսակ 1. Բնակչության որակի, կյանքի միջավայրի որակի, կյանքի որակի իդեքսները Երևանում և ՀՀ մարզերում (Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից, տվյալները ստացվել են ՀՀ ԱՎԾ-ից և հաշվարկվել հեղինակի կողմից)

Երևան և մարզեր	Բնակչության որակի ինդեքս	Կյանքի միջավայրի ինդեքս	Կյանքի որակի ինդեքս
Երևան	0.526	0.387	0.457
Արագածոտն	0.332	0.096	0.214
Արարատ	0.235	0.156	0.196
Արմավիր	0.290	0.180	0.235
Գեղարքունիք	0.228	0.115	0.172
Լոռի	0.093	0.013	0.053
Կոտայք	0.155	0.163	0.159
Շիրակ	0.093	0.101	0.097
Սյունիք	0.412	0.207	0.310
Վայոց ձոր	0.378	0.182	0.280
Տավուշ	0.241	0.08	0.161

Վայոց ձորի մարզում նույնպես փոքր է սովորողների բաժինը, արդյունաբերական արտադրանքի ծավալը, վատ՝ սոցիալական ենթակառուցվածքի վիճակը:

Սյունիքի մարզում փոքր է աշխատանքային ռեսուրսների, զբաղվածների բաժինը, կա բնակարանով ապահովվածության, սոցիալական ենթակառուցվածքի բարելավման խնդիր:

Երևանից մեծ է միգրացիան, փոքր է աշխատանքային ռեսուրսների, զբաղվածների բաժինը բնակչության մեջ, արդյունաբերական արտադրանքի ծավալը, ցածր՝ բնակարանով ապահովվածության, անձնական անվտանգության մակարդակը:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանում, ընդհանուր առմամբ, առկա են մի շարք խնդիրներ: Ամփոփելով կատարված հետազոտությունը՝ կարելի է առանձնացնել դրանցից հիմնականները՝

- մեծ է արտագաղթը, փոքր՝ աշխատանքային ռեսուրսների բաժինը,
- ցածր է արդյունաբերության զարգացման մակարդակը և հետևաբար փոքր՝ զբաղվածների բաժինը, բարձր՝ աղքատության մակարդակը,
- ցածր է սպասարկման ոլորտի զարգացման մակարդակը,
- սոցիալական ենթակառուցվածքն ունի բարելավման անհրաժեշտություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Е. Плахова, Качество жизни: концепции и практика, "Грани" 4 (30), июль-август 2003 [E. Plakhova, Life quality: concepts and practice, "Grani" 4(30), July-August 2003]
2. Աննա Մակարյան, Անետա Բաբայան, ՀՀ-ում կյանքի որակի ցուցանիշի գնահատում (QL Index), հետազոտություն, մեթոդաբանություն, Երևան ,Նոյեմբեր, 2010 [Anna Makaryan, Aneta Babayan, Life quality assessment in Armenia (QL Index), research, methodology, Yerevan, November, 2010]
3. М. О. Юрьевна, Проблемы определения и измерения уровня качества жизни населения, Проблемы развития территории: ВЫП. 6 (74), 2014 [M. O. Yurevna, Problems of determining and measuring the level of population life quality, territory development problems, edition 6 (74), 2014]
4. Н. А. Щитова, Т. В. Гаврилова, «Качество жизни населения Ставропольского края», Вестник Ставропольского государственного университета, 2005 [N. A. Shitova, T. V. Gavrilova, Population life quality of Stavropol region, messenger of Stavropol State University, 2005]
5. United Nations Development Programme, Human development report: technical notes, 2013